

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ

Սուրհանդակում, № 86, մէջ է բերուած Վեհափառ Հայրապետի թուղթը, որ նորին Սրբութիւնը ուղղել է բժշկապետ Ա. Մ. Բաբայեանին, վերջինիս «Եկեղեցական Առողջապահութիւն» աշխատութեան առիթով: Ահա այն թուղթը.

— Ձեր... «Եկեղեցական առողջաբանութիւն» անուն աշխատասիրութիւնն ստացայ և ուշադիր հետեւեցայ Ձեր այդ աշխատութեան ամեն մէկ տողին: Սնվիճելի ճշմարտութիւն մէ այսօր թէ՛ սխալ ըմբռնուած քաղաքականութիւնը մէկ կողմէն, տգիտութիւնը, քարացած սովորութիւններն և նախապաշարումները միւս կողմէ, բարոյից անկման, կրից անզսպութեան տեղի տուած շարք մը տարափոխիկ հիւանդութիւններ, մանաւանդ վատ ախտը գոգցես փափայանքով մը կը սնուցանեն և ահռելիօրէն կը տարածեն: Գիտական աշխարհն այս ողբալի վիճակին ի դարման, մանաւանդ այնքան ախտատարած մանրէներու գոյութեան հաստատուելէն ի վեր, առողջապահիկ պայմանները մեծ խնամքով կը մշակէ մարդկային ոեւը այլասերումէ, ֆիզիքական քայքայումէ և նոյն իսկ տարածամ մահուանէ փրկելու համար:

«Առողջաբանական գիտութեան և առողջապահիկ պայմաններու շարքէն դուրս պէտք չէր մնար և եկեղեցական առողջաբանութիւնը»:

Այս առաջաբանից յետոյ, Վեհ. Հայրապետը մի առ մի թուում է գրքի մէջ պահանջուած հետեւեալ բարեփոխութիւնները, որ այժմէն իսկ աստիճանաբար կարող են գործադրուել ըստ իր բարձր հայեցողութեան:

1) Եկեղեցիների մէջ նստարաններ և աթոռներ ժողովրդի համար դնելը, 2) եկեղեցական երաժշտութեան կարգաւորումը: 3) եկեղեցիների մէջ օգտօվութիւն գործիք հաստատելը. 4) ձմերնային ժամանակ երեղեցիների ջեռուցումը. 5) ախտավարակ երկսեռ անձանց մինչև առողջանալը պսակման արգելքը. 6) գլխագինի և դրամօթիտի ջնջումը. 7) պահեցողութեան կամ պատի առողջաբանական տեսակէտով բացատրւելը. 8) ծննդկան մայրերի 8—9 օրից անկողնից ելնելը. 9) գերեզմանները ծառադարդելը. 10) գերեզմանների շուրջ ծառաստանով թումը շինելը. 11) ննջեցեալների մարմինների լուացքն առողջապահիկ պայմանների համաձայն կատարելը. 12) ննջեցեալների թաղումն երեք օրով յետաձգելը. 13) դրա համար գերեզմանատներում մատուռ ունենալու պէտքը. 14) բարեական և մեռելահամբոյրի ջնջումը. 15) մեռելահացի քելեխի ջնջումը. 16) ննջեցեալների երեսկալի և դրան յարակից կտաւեղէնների ջնջումը. կամ ապանեխման ենթարկելը. 17) մեռելական մետաղեայ, ինչպէս և շինծու ծաղիկներով պսակները, որոնք պահւում են օւրիշների վրայ էլ գործածելու համար, դնելու նորամուտ սովորութեան աւելորդութիւնը և վնասները ժողովրդի համար. 18) ննջեցեալները դագաղակառքով փոխանակ ուսերի վերայ, գերեզմանոց փոխադրելը. 19) միևնոյն մեռելագագաղի հասարակաց գործածութեան համար ամեն անգամ ապանեխման ենթարկելու կարիքը. 20) մեռելաթաղ քահանայից կառքով գերեզմանոց դնալու թոյլտուութիւնը:

«Այս եւ ասոնց նման կէտեր կամ բարեփոխումները Հայաստանեայց եկեղեցւոյ հայեացքով կանոնական արգելք մը չունեն, եւ կրնան այժմէն գործադրուել աստիճանաբար, ուր ուր յարմարութիւն եւ միջոցներ կան»:

«Կարելի է եկեղեցիները էլէքտրական կանդելներով լուսաւորելը, նոյն այդ 20 կէտերու կարգն անցնել,

ինչ որ սակայն մոմավաճառութենէ գոյացած շահուն կը բաղխէր, զոր իրաւամբ գիտած էք ձեր եկեղեցական առողջաբանութեան մէջ։ Այսուամենայնիւ որտեղ որ յարմարութիւն ունեն ու կը խնդրեն, կը թոյլատրուի, ինչպէս թոյլատրեցինք Սիմֆերոպոլի եկեղեցիին, միայն տաճարների և բեմի կերոններ ու մոմեր պահելով։

«Այս և այլ ասոնց յարակից առողջաբանական պահանջները, որոնց մէջ ուշադրութեան արժանի տեսլի ծանր խնդիրներ ալ կան, որոնք Հայաստանեայց ընդհանուր եկեղեցւոյ իրաւասութեան կը պատկանին։ Այս կարգի խնդիրները բարեփոխելու, լուծելու և ինորոյ կանոնելու հեղինակութիւնը Հայաստանեայց ընդհանուր համազգային եկեղեցական ժողովին կը պատկանի։

«Քաջ գիտէք արդէն, թէ միայն քաղաքական տիրող հանգամանաց և պատճառներու հետեւանօք՝ վեց դարէ ի վեր կարելի եղած չէ համազգային եկեղեցական ժողով գումարել։ Այս ժողովի գումարման պէտքը սակայն այլևս անհրաժեշտ դարձած է. ուստի թուրքիոյ հայոց արգի կացութիւնը աստիճան մը անդորրանալէ և Ռուսիոյ հայոց կարգ մը խնդիրներն յարգարուելէ յետոյ՝ պիտի ձեռնարկենք այդ ընդհանուր ժողովի գումարման գործին, կը յուսամ թէ յաջողենք։

«Նուիրական պարտքս կը համարիմ այժմէն հաստատապէս յայտնել և յայտարարել, թէ Հայաստանեայց եկեղեցւոյ հաւատոյ դաւանութիւնն ու վարդապետութիւնն ամեն պարագայի մէջ անձեռնմխելի պիտի մնայ, ինչ որ անպայման կը պահանջէ Անոր դոյութեան և ինքնուրոյնութեան անխախտ պահպանման բացարձակ պէտքը։

Այս թղթով Նորին Սրբութիւնը հնարաւոր համարելով եկեղեցական գործերի և կարգերի բարւոքումն—է՛ որ վարչական մասնական կարգադրութեամբ և է որ ազգային ընդհանուր ժողովով, հաւատոյ դաւանութեան և վարդա-

պետութեան վերաբերութեամբ յայտնում է, որ «ամեն պարագայի մէջ «անձեռնմխելի պիտի մնայ, ինչ որ կը պահանջէ անոր գոյութեան և ինքնուրոյնութեան անխախտ պահպանման պէտքը»:

ԱՆՊԱՏՇԱՃ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԴԷՊԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Հայ հասարակութեան միտքը այժմ զբաղուած է Կ. Պօլսոյ ազգային երեսփոխանական ժողովի մարտի 26-ին արած մի որոշմամբ, որով այդ ժողովը թէև ճնշման տակ, թոյլ է տուել եկեղեցիներում միտինգներ գումարել: Ինչպէս երևում է, պայքարը սաստիկ է եղել, և ազգային ժողովի երիտփոխաններից մէկը գանակոծուել է, միւսները անարգանքի են ենթարկուել: Հրաժարուել է երիտփոխանական պաշտօնից Մինաս Զիրազ և կարծուում է, թէ ուրիշներն էլ կը հրաժարուին:

Եկեղեցի նշանակում է հաւատացեալների ժողով. Փրլուկիչը ասել է, «տուն իմ տուն աղօթից կոչեսցի», և եկեղեցին իւր իսկական նպատակին ծառայելով՝ աղօթքի տուն և հաւատացեալների ժողով պէտք է լինի միայն:

Կ. Պօլսոյ ազգային երիտփոխանական ժողովը իրաւունք չունի մի վճիռ դնել, որ իւր իրաւասութիւնից եւ բարձր է և դուրս, որովհետեւ երեսփոխանական ժողովը մի խորհրդարանական ժողով է սահմանափակ իրաւունքներով, քննելու և վճռելու միայն Տաճկաստանի հոգեւոր վարչական գործերը. եկեղեցու նպատակը փոխող որոշում տալը ազգի լիութեան իրաւունքի դէմ բռնաբարութիւն է: Հայ եկեղեցին միայն Տաճկաստանում չէ, այլ իսփիւռս աշխարհի երեսփոխանական ժողովը իրաւունք չունի հաստատել մի վճիռ, որ հայ եկեղեցու լիութեան է պատկանում, իրաւունք չունի եկեղեցին դարձնել ժողովասրահ, որ ամենեւին չի համապատասխանում նրա նպատակին ու նշանակութեան: Եկեղեցին հաւատացեալներին է. ոչ ոք պէտք չէ բռնաբարի այդ իրաւունքը, ոչ ոք իրաւունք չունի վիրաւորել հաւատացեալների կրօնական զգաց-

մունքը, որ մարդու համար ամենանուիրականն է:

Բարեբաղդաբար ուսաստանայ լրագրութիւնը, ինչ ուղղութեան և լինէր, հակառակ է եկեղեցիներում միտինդներ գումարելու որոշմանը:

Նրանք, որոնք կողմնակից էին եկեղեցիներում միտինդների գումարելուն, ասում էին որ Վեհ. հայրապետը իւր պատրիարք եղած ժամանակ թոյլ է տուել. սակայն Արարտաի սկզբում արտատպած կոնգակը գալիս է հերքելու այդ առարկութիւնը:

Բիւզանդիոնը գրում է, որ մարտի 28-ի Ազգային ժողովի նիստին պէտք է ներկայացուեն տասն և չորս թաղական խորհուրդների հանրագրութիւնները ընդդէմ եկեղեցիներում միտինդ գումարելուն, ոյնպէս և պէտք է հազարաւոր ստորագրութիւններ ներկայացուեն զանազան թաղերից: Բիւզանդիոնը աւելացնում է. «կուսակցականաց կողմէ Պօլսոյ եկեղեցիներուն ազդարարուեր է, որ կիրակի օր միթինդներ պիտի գումարուի!!!»: Թաղական խորհուրդները պատասխաններ են, թէ իրենք եկեղեցիները չեն կրնար տրամադրել, բռնի կարելի է ձեռք ձգեն»:

Զընայելով այս ամենին, լրագրները հաղորդեցին, որ մարտի 26-ին ազգային ժողովը միաձայն վաւերացրել է եկեղեցիներում միտինդ գումարելու առաջարկը:

Բայց թէ ինչպէս է կազմուել այդ միաձայնութիւնը, պարզում են Եդիսեայի երեսփոխան Բիւզանդ Քէչեանի և Մինաս Չէրազի հրաժարականները երեսփոխանական պաշտօնից: Այդ հրաժարականները բաւականօրէն պարզում են այն պատճառները, որոնցով առաջ է եկել միաձայն վճիռը: Ահա այդ հրաժարականները, որ արտատպում ենք Մշակից:

1. «Մեծ Ատենապետ Էֆէնդի.

Ղալաթիոյ եկեղեցիին ըսկին մէջ դարանակաւ կազմակերպեալ սօսիալիստներու ձեռքն խնայուլ յօժարութիւն չգտալով իմ մէջս, և ազգային ժողովոյ սեմերուն վերայ ազդ. երեսփոխաններու թշնամանուելուն, գրչի ազատութեան ըռնաբարելուն դէմ բոլոր ուժովս բողոքելով կը

վութամ իմ հրաժարականս հասցնել ձեզ, կար և կարողութիւն մաղթելով Եղեսիոյ ապագայ երեսփոխանին կողերուն և ոսկոռներուն: Խնդրելով որ ընդունիք հրաժեշտի ողջոյնս՝ մնամ ազգիս անձնուէր Բիւզանդ Քէշեան, հրաժ. երեսփոխան Եղեսիոյ. Պերայ, Մարտ 26, 1910:

2, «Ձեմ կարող երեսփոխանութիւն ընել ամբողջային ճնշումի տակ» Մինաս Ձերազ:

— Հորիզոնը արգարացի դիտողութիւններով նշաւակելով եկեղեցիներում միտինգ գումարելու որոշումը, «խայտառակ փաստը» վերնագրով դիտողութեան մէջ դատապարտում է Սուխումի շրջանի եկեղեցիներից մէկում թատրոն ներկայացնելը: Հորիզոնը իւր դիտողութիւնը վերջացնում է.

«Մատնանշենք և մի շարք բնորոշ հանգամանք. Ինչպէս երևում է, մեզ՝ աշխարհականներիս է վերապահւում հայ եկեղեցին՝ սանձարձակութիւններից պաշտպանելու գործը: Իսկ էջմիածինը պարտք է համարում միայն... խորին և փառահեղ լռութիւն պահպանելը:

Էջմիածինը, ինչպէս տեսան ընթերցողները լրագրերում և այժմ էլ Արարատում տպուած կոնդակից, լռութիւն չէ պահպանում: Դեռ անցեալ Հոկտ.—Նոյեմբեր ամսատետրում Արարատը Ամերիկայի «Հայրենիք» թերթից առնելով տպագրել է (եր. 830) պատրիարքական փոխանորդի հերքումն, որով նա յայտնում էր, թէ արգելք չէ դրել միտինգների գումարելուն: Այդ հերքումը արատապելով, «Արարատը» երգիծաբար ասել էր. «ուրեմն թոյլ է տալիս» և յաւելացրել էր, «Մեզ մնում է զարմանալ եկեղեցին չի կարող կուսակցական մարդերու միթինկներու տեղ լինել»: «Արարատ»ի պաշտօնական շրջանակում դրանից աւելին չէր կարելի ասել:

Եկեղեցին էջմիածնի հետ ժողովրդինն է: Շատ ուրախ ենք ժողովրդի հետ միասին հայ եկեղեցին պաշտպանել սանձարձակութիւններից: Եթէ ինքն, հասարակութիւնն ու ժողովուրդը չը կամենան և չը գործակցեն, ոչ մի իշխանութիւն, որքան և բարեկարգ և ուժեղ լինի, չի կարող ապահովել ընդհանուր բարեկարգութիւնը և արմատախիւ անել անկարգութիւնը:

— Թիֆլիզի լրագրները արդար զայրութով բողոքում են պատանիների մի չարութեան առիթով: Աւագ ուրբաթ գիշերը Զգրաշէն եկեղեցու մօտ մի քանի պատանիներ պետարդայ են պայթեցրել գիշերային հսկման և սուգի ժամանակ ահ ու սարսափի մատնելով ժամաւորներին: Ինչո՞ւ, ինչի՞ց դրդուած: Եթէ Աստուծոյ երկիւղը և մարդկանց ամօթը այլևս տեղ չունեն, գոնէ սէրը դէպի իրանց մերձաւորները—մայրերն ու քոյրերը պէտք է յետ կասեցնէր այդ պատանեակներին անմիտ չարութիւնից:

Այս չարութիւնը աւելի ևս ծանր կերպարանք է ստանում, ի նկատի ունենալով, որ գործողները փողոցային սրիկաներ չեն, այլ դպրոցական աշակերտ:

Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ

Ամսիս 15-ին Աւագ—Հինգշաբթի երեկոյեան հանդիսաւորութեամբ կատարուեց ոտնալուայի արարողութիւնը: Հանդիսագիրն էր Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբութիւնը ոտնալուայից յետոյ աւուր պատշաճի քարոզ խօսեց բացատրելով սիրոյ և խոնարհութեան մեծութիւնն ու անհրաժեշտութիւնը ամեն մի քրիստոնէի համար թէ նրա առտնին և թէ հասարակական կեանքում:

— Ամսիս 18-ին Մայր Աթոռիս միաբանութիւնը Զատիկի տօնի շնորհաւորութեան համար Ս. Պատարագից առաջ ներկայացաւ Վեհափառ Հայրապետին: Նորին Սրբութիւնը շնորհաւորելով Յիսուսի յարութիւնը, բարեմաղթեց, որ թմրած մտքերը, հոգիներն ու սրտերն ևս յարութիւն առնեն լաւը, բարին և կատարեալը հասկանալու ու գործելու համար: Քրիստոսին հաւատացողն մեղքի մեռելութիւնից յարութիւն առնելով պէտք է քրիստոնէի վայել կեանքով ապրի: